



ՍՄԲԱՏ ԴԱՒԹԵԱՆ
ԸՆԹԱՅԻ ՀՈԽՈՎՐՈՒԹԵԱՆ ՀԱՅ ԼԵԶՈՒԻ

ՏԱՐՐԱԿԱՆ
ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
Արդի Հայերէնի

Ի ՊԵՏՈ ՆԱԽՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՅ

ՊԱԼԵՐԱՏԵԱԼ ՅԱԽՈՒՄՆԵԱԿԱՆ ԽՈՇՀԵԱՅ
ԱԶԳԱՑԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Բ. ՑՊԱԳՐՈՒԹԻՒՆ



Կ. ՊՈՂԻՄ

Տալագրութիւն Ն. Ճ. Ա. Առամճան

1892



ՎԱԻԵՐԱԳԻՐ

ՊԻՍՈՒԽՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅՑ

Ազգ. Կեդր. Վարչութեան



Ուսումնական Խորհուրդս բնելով ՏԱՐՐԱԿՈՆ ՔԵՐԱԿԱ-
ՆՈՒԹԻՒՆ ԱՐԴԻ ՀՅԱՅԵՐԵՆԻ անուն դասագիրքն զոր պատրա-
սած է ազգային ուսուցիչներէց Սմբատ Էջենտի Դաւրեան,
Կ'արտօնէ անոր գործածութիւնն Ազգ. Նախակրթարանաց մեջ:

Ի դիմաց Ուսումնական Խորհրդոյ

Ա. ԱՏԵՆԱ.ԴՊԲ

ՊՈՂՈՍ Գ. ՔԵՐԵՍԵՔԵԱՆ

ԱՏԵՆԱ.ՊԵՏ

Բ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՏԱՐՐԱԿԱՆ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ

ՆԱԽԱ.ԳԻՏԵԼԻՔ

1. Մեր խօսած կամ գլուխ լեզուն կը կտղմուի
բառերէ:

2. Բառերով կը բացատրենք մեր դաշտարներն
ու զգացումները:

3. Բառերը կը կտղմուին վանկերէ և վանկերը՝
սաներէ:

4. Վանկ կը կոչուին մէկ կամ մէկ քանի տառեր
որք մէկ անգամէն կը հնչուին:

5. Տառ կամ զիր կը կոչուին այլուրէնի 38
Նշանները կամ ձեւերը:

6. Երկու տեսակ գիր կոյ. Զայնառոր և Բաղա-
ձայն:

7. Զայնառոր. Են ա, ե, է, ց, ի, ո, ւ, օ որք
կրնան արտաքերուիլ առանձինն:

8. Բաղաձայն են. բ, գ, դ, զ, թ, ժ, իւ, ժ, իւ, ծ,
կ, ի, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, չ, պ, ջ, ռ, ս, վ, ռ, ց,
շ, փ, ժ, ժ. Սառնք ձայնաւորներու հետ միայն կրնան
հնչուիլ:

ՀՐԱՀԱԳԱ. 1.

Դասատան հատուած մը ցոյց կուտայ ընթեցանութեան
գրեկն եւ առակերտ նոյն հատուածի բառերն ուղղահայեաց
սիւնակի մէջ կ'օրինակեն, վանկերը զատելու:

9. Երբ քանի մը բառեր ամբողջ խմագոտ տան, կը
կազմեն խօսի:

10. Հայերէն լեզուի բառերը տան տեսակ են.

Անոն կամ Գոյական, Յօդ, Ածական, Դեր-
անուն, Բայ, Դերբայ, Մակրայ, Նախադրութիւն,
Շաղկապ, Չայնարկութիւն:

11. Այս տան տեսակ բառերը կը կոչուին Մա-
ստնի բանի (խօսքին մասները):

12. Գերականութիւնը կը սովորեցնէ որոշել խօս-
քին մասերը, ճանչնալ անոնց յատկութիւնը, փոփո-
խութերը, իրարու հետ ունեցած յարաբերութիւնները,
ևայլն:

Հ Յ Տ Ա Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

13. Կետադրութիւնն է զառել խօսքի մանդամ-
ներն այլ և այլ նշաններով որոց պէտք է ուշ դնել
զրութեան մէջ:

14. Այս նշաններն են. Ստորակէս (,), Միջակէս
(.), Բութ (՝), Վերջակէս (։), Եկշ (՞) Պարոյկ (՞),
Երկար (՝), Կախում (…), Գիծ (—), Չակէրս (« »),
Փակազիծ (()), Ապարարց (՝), Ենթամնայ (՞):

Ծանօթ. — Դաստառուն ընթերցանութեան միջոցին օրի-
նակներով կը բացատրէ սոյն նշաններու կիրառութիւնը:

Հ Յ Ա Հ Ա Ն Գ Զ .

Գտէմ տան միավանկ բառ, տան՝ երկայանկ բառ, տան՝
եռայանկ են. : Ապա անոնց կանչերը զատեցէմ ուղանիզ գծով:

Գ Լ Ո Ւ Խ Ա .

Ա Ն Ո Ւ Խ Կ Ա Մ Գ Ո Յ Ա Կ Ա Ն

15. Մարդ, անասուն և առարկայ ցոցնող բառերը
կը կոչուին անոն կամ գոյական:

Խնդիքս՝ Պողոս, ձի, զիրք:

Գիտ. Կան անուններ որոնք մաքով միայն կը հասկցուին:
Խնդիքս. սկր, խելք, շանք, ցաւ, եւլն:

Հ Յ Ա Հ Ա Ն Գ Յ Յ .

Օրուեցէմ մարդ (անձ), անասուն (կենդանի) եւ առարկայ (իր)
ցուցնող բառերն եւ զատ զատ սիւնակներու մեջ զրեցէ:

Հնկոյզ, խզունջ, մշակ, տգամանդ, Աղամ, բարձ, ա-
կանջ, գառաւոր, կայէն, հովանոց, կաքաւ, մարգագետին,
արեւ, Գրիգոր, եղ, սեւամորթ, ճալուռ, տախտակ, կեռաս,
Պօլսեցի, գիրք, էշ, սատանքս, բնկեր, դաշտ, աաշտ, Բեն-
իամին, կնքահայր, չաքար, կէտ, մժեղ, ծեր, նաւ, ուղտ, հող:

Հ Յ Ա Հ Ա Ն Գ Ա .

Օրուեցէմ տեսանկի կամ հիւրական բաներ եւ անտեսանկի կամ
մասուն բաներ ցուցնող անունները:

Գրիչ, թոշուն, հոգի, խաչ, պատկեր, հրեշտակ, արօր,
Աստուած, սեղան, ապրուստ, աքաղաղ, եռանդ, մարդ,
բաժակ, սէր, աշխոյժ, ալիւր, կաքաւ, կաղամբ, պատիւ,
միտք, դբամ, աշխատանք, կացին:

Հ Յ Ա Հ Ա Ն Գ Յ .

Դեմք եխնգ անձի եխնգ կենդանիի եւ եխնգ առարկայի անուն:

Հ Յ Ա Հ Ա Ն Գ Յ .

Դեմք տան միավանկի (Ծիւրական, բանձարցեալ) եւ տան
անտեսանկի (մաւոր, վերացեալ) առարկաներ:

ՀԱՅԱՐԱԿ ԱՆՌԻՆ ԵՒ ՑԱՏՈՒԿ ԱՆՌԻՆ

16. Անունն երկու տեսակէ. հասարակ և յատուկ:

17. Հասարակ անունը կրնայ պատշաճիլ տեսակի
մը ամէն անհատին, ինչպէս. մարդ, ձի, fur:

18. Յատուկ անունը տեսակի մը մէկ անհատին
կրնայ ըստիլ, ինչպէս Աղամ, Եւա, Եվրաս:

Գիտելիք Ա. Մարգերու, քաղաքներու, գիւղերու, գե-
տերու, երկիրներու, ծովերու եւայլն անուներն յատուկ
անուն են:

Գիտելիք Բ. Յատուկ անունները գլուխքրով կը սկսին:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ 7.

Յատուկ եւ հասարակ անունները զատ զատ սփառվեներու մէջ
պրեցէք:

Եկեղեցի, ձի, Մարիամ, գետ, տուն, Յակոբ, տղայ,
Տրամիլոն, ժամկոչ, եղբայր, Շիրակ, պարտէզ, Երուսաղէմ,
յորեն, ժամացոյց, հովանոց, էջմիածին, ծառ, թռչուն:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ 8.

Սօսկիեր բան երեք յատուկ անուն որ ցուցեն
Մարգ, կին, քաղաք, գիւղ, գետ, լեռ, ազգ, թագա-
լոր, մարգարէ, սուրբ:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ 9.

Սօսկիեր բան երեք յատուկ անուն :
Քաւառար, թաղի, փողոցի, վանքի, եկեղեցականի, վա-
ճառականի, վարժապետի, տօներու :

19. Թիւն երկուք է. եզակի և Ցովակի:

20. Անունն եզակի է երբ մէկ անձ, մէկ անտ-
առն, մէկ իր միայն կը ցուցնէ:

Ինչպէս՝ հայր, զիրֆ, արռու:

21. Անունն յովնակի է երբ շատ անձ, շտա-
նասուն, շատ իր կը ցուցնէ:

Ինչպէս՝ հայրեր, զիրֆեր, արռուներ:

22. Եզակի անունն յովնակի ընելու համար պէտք
է ծայրը եր կամ ներ աւելցնենք:

Եմ աւելցնելու է եթէ անունը միայնանկ է:

Ներ » » » բազմավանկ է :

Դիս. Ա. Քանի մը միավանկ բառեր կան որոնք ի բնէ և
ունենալով իրենց ծայրն, սովորութիւն եղած է յոքնակին
մէջ այս և գիրը դնել: Ասոնք են՝ եղ-եղներ, շեռ-շեռներ,
ըեռ-ըեռներ, հարս-հարսներ, մաս-մասներ եւն:

Գիս. Բ. Յով վերջացող բազմավանկ անուններուն յ տառը
կը ջնջուի յոգնակին մէջ. ինչպէս՝ յահանայ-յահանաներ:

Այսպէս նաեւ որայ, տղայ, առարկայ, պապիայ, շուկայ,
ատանայ, շղրայ, ճամբայ:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ 10.

Հետեւեալ անուններն յոգնակի լրէ:

Հաց, կերակուր, գպրոց, թագաւոր, զինուոր, բանակ,
թնդանօթ, հիւանդ, բժիշկ, գեղ, սպասաւոր, ծառայ, աղա-
խին, ներ, քոյր, աներ, հօրաքոյր, մատնոց, ասեղ, կար, գե-
րեզման, մահ, տրտութիւն, ուրախութիւն, ցաւ, ախտ, հասակ:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ 11.

Եզակիներն յօգնակի լրէ եւ յոգնակիներն եզակի:

Մարեր, աղոսեր, մարգեր, պարտէզ, այգի, ձիեր,
եղներ, գոմէշ, էշեր, ցուլեր, տետրակ, գիրքեր, մանուկ,
նեղութիւն, ամիս, եղբայրներ, քոյր, քաղաք, լեռներ, ծա-
զիկ, պատկ, զինուոր, փողեր աներ, զմելիններ, ներ, ըն-
կեր, խօսքեր, բառ, գիծ, լեարդ, ասաղ, անդզ, գամբու :

ՀՈԼՈՎ.

23. Եղակի թէ յոքնակի անուններուն ծայրը կերպ
կերպ կը փոխուի. այս է հոյովը.

Բար, բարի, բարէ, բարերու եւայլն:

24. Հոլովը վեց է. Աւղական, Սեռական, Տրա-
կան, Հայցական, Բացառական, Գործիական:

25. Անուն մը հոլովելու ընդհանուր ձեւն է:

Եղակի Յոգնակի

Աւղական	հաց	հաց եր
Սեռական	հաց ի	հաց երու
Տրական	հաց ի	հաց երու
Հայցական	հաց	հաց եր
Բացառական	հաց է	հաց երէ
Գործիական	հաց ոլ	հաց երով

Հ Բ Ա. Հ Ա. Ն Գ. 12.

Սաստ պէս հոլովեցէք սա միավանկ անունները.
Խաչ, քար, փայտ, կաթ, վարդ, ծառ,
եղ, բեռ, լեռ, հարս, մատ:

Հ Բ Ա. Հ Ա. Ն Գ. 13.

Հոլովեցէք սա բազմավանկ անունները:
(Զմանանք թէ բազմավանկ անունները մէր մասնիկով յօն-
ակի կըլլան):

Ականջ, երես, սեղան, աթոռ, դպրոց, գուլզայ, աղայ,
շղթայ:

Հ Բ Ա. Հ Ա. Ն Գ. 14.

Հոլովը նոյն պահելով՝ սա անուններն եղակի քրէք.
Հացեր, խաչերու, փայտերէ, քարերով, կովերու, տու-
ներէ, ձիեր, վարդերու, ծովերու, ծառերու, քիթերով,
բերաններ, ականջներէ, երեսներու, սեղաններով, աթոռ-
ներու, դպրոցներ, թաշկնակներու, պատառներով, կերա-
կուրներէ:

ՀՈԼՈՎՄԱՆ ԶՐՄ ԶԵՒԵՐ

26. Հոլովման չորս տեսակներ ալ կան որսնք ե-
ղակիի մէջ կը տարբերին այս ընդհանուր ձեւէն, բայց
յոքնակիի մէջ նոյն կերպով կ'ըլլան:

Ա.	Բ	Գ	Դ
մարդ	հոգի	մեծութիւն	օծում
մարդու	հոգւոյ	մեծութեան	օծման
մարդու	հոգւոյ	մեծութեան	օծման
մարդ	հոգի	մեծութիւն	օծում
մարդէ	հոգիէ	մեծութենի	օծմանէ
մարդով	հոգւով	մեծութեամբ	օծմամբ

Հ Բ Ա. Հ Ա. Ն Գ. 15.

Տարդ բառին պէս հոլովեցէք.

Ձի, կոյլ, ծով, ճաւ, Հայ, շահ, էշ, դար, հաւ, մահ,
րի, արեւ, ճամ, ամիս, շաբաթ (շաբթու), տղայ (տղու),
ճամբայ (ճամբու):

Հ Բ Ա. Հ Ա. Ն Գ. 16.

Հոգի բառին պէս հոլովեցէք.

Տարի, զիմի, որդի, սովի, զարի, բարի, ձիթենի, դափ-
նի, կղզի, կաղնի, դրացի, զօսի:

Հ Բ Ա. Հ Ա. Ն Գ. 17.

Մեծորիւն բառին պէս հոլովեցէք.

Նեղուրիւն, յացորիւն, ողորմորիւն, յարորիւն, այ-
ցելորիւն, մանկուրիւն, առասորիւն, հիւանդորիւն եւն:

Հ Բ Ա. Հ Ա. Ն Գ. 18.

Օծում բառին պէս հոլովեցէք.

Խոսում, քաղում, անկում, բացում, խրում, հոլովում,
խոնարհում, բարձում, Համբառանում, բաժանում. եւն:

ԳԻՏԵԼԻՔ ՀՈԼՈՎՄԾՈՆՑ ՎՐԱՅ

27. Երրորդ ձեւին պէս Սեռականի եւ Տրականի մէջ եան կ'ըլլան՝ իւն վերջաւորող բառեր։

Օրինակ. սիւն, ձիւն, անկիւն, արիւն, եւն։

Ասոնց կը հետեւին. հանգիս, կորուս, փախուս, զայուս, ժողովուրդ, ծնունդ, սնունդ, սերունդ։

28. Չորրորդ ձեւին պէս Սեռականի եւ Տրականի մէջ ան կ'ըլլան շատ մը բառեր. կնիկ, աղջկի, զարոն, աշոն, մանուկ, շուն, տուն, մուկ, ձունկ, դուռ, լեռ, հիմ, անուն, նուռ, քոռ, թռո, առու, իրիկու, հերու, ամառ, ձմեռ։

Նոյնպէս Սեռականի եւ Տրականի մէջ ուան կ'ըլլան ժամանակի գաղափար տուող բառեր, ինչպէս ժամ, օր, ամիս, տարի, ամառ, ձմեռ, ցերեկ, զիշեր, ատեն, ժամանակ, ամիս, շաբար։

Ման. Դիտելի է սակայն թէ վերսիշեալ Գիտելիքներու պատկանող բառեր բայցառականի եւ գործիականի մէջ կը մնան հոլովման ընդհանուր ձեւով։

29. Սեռականի եւ Տրականի մէջ օր կը վերջաւորին, հայր, մայր, եղբայր, հօրեղբայր, մօրեղբայր, ծծմայր եւն։

30. Սեռականի եւ Տրականի մէջ ոչ կը վերջաւորին, կին, յոյր, տէր, ընկեր, տալ, աներ, մեր, կեսուր, եւն։

31. Սեռականի եւ Տրականի մէջ ոյ կը վերջաւորին. Կարին, ամիս, Աստուած, սեր, ժողով, Պոլիս, եւն։

Հ Բ Ա Հ Ա Ն Գ 19.

Հետևեալ բառերն իրարու կապեցէք այնպէս որ առաջինը

Ա. Սիւն, արիւն, հանգիս, ծնունդ, սերունդ։

Բ. Կին, անուն, մանուկ, ձուկ, հիմ, առու, օր։

Գ. Կնիկ, անիսահայր, ծծմայր, մօրեղբայր։

Դ. Տիկին, մօրայոյր, ընկեր, կեսուր, դասընկեր։

Ե. Ամիս, Աստուած, սեր, խորհուրդ, Կարին։

32. Հոլովման այս զանազան ձեւերը կրնան նաև ընդհանուր ձեւին համեմատ հոլովուիլ. ինչպէս՝ ձիւնի, անունի, ժամանակի, ընկերի, ժողովի եւլն։

33. Կան բառեր որոնց ձայնաւորը զբերը կը կորսուին եզակի հոլովման մէջ։

Ինչպէս. Գիր-գրի. թերան-թերնի, մանուկ-մանկան։

Գիս. Յոքնակիլ մէջ այս ձայնաւորները կը պահպահին. զիւերու, թերաններէ, մանուկներով։

ՅԱՏԿԱՅՈՒՅԻՉԻՉ ԵՒ ՅԱՏԿԱՅԵԱԼ

34. Յատկացուցիչ կը կոչուի այն սեռական հոլովմանուն որ կը ցուցնէ թէ բան մը որո՞ւն է։

Օրինակ. Գրիի կողք, ծառի ձիւզ.

Այս օրինակներուն մէջ զրիի եւ ծառի բառերն յատկացոցիչ են, իսկ կողի եւ ձիւդ յատկացեալ են։

Հ Բ Ա Հ Ա Ն Գ 20.

Հետևեցէք.

Բերան, զիծ, զրուխ, դուռ, նուռ, ամառ, քուդր, ձմեռ, ակումբ, կարին, Պոլիս։

Հ Բ Ա Հ Ա Ն Գ 21.

Հետևեալ բառերն իրարու կապեցէք այնպէս որ առաջինը յատկացոցիչ ըլլայ, երկրորդն յատկացեալ։

Գրիչ ծայր, խնձոր կուտ, սալոր կեղեւ, գուռ բանալի, կատու պոչ, նամակ հասցէ, առիւծ բաշ, փողոց սալարկ, գորոց տեսուչ, ազքատ հագուստ, ժամացոյց շղթայ, քաշ բնակիչ, թուր պատեան, քահանայ շուրջառ, աչք լոյս։

Հ Բ Ա Հ Ա Ն Գ 22.

Հետևեալ բառերուն բոլ մէյմեկ յատկացեալ գրէք.

Աստուծոյ —. ծովուն —. մեղուին —. դասատուին —. ջրհորին —. աչքին —. ձեռքին —. հօրս —. սեղանին —. եւն —.

ԳԼՈՒԽ Բ.

Յ Յ Դ

Յ Յ Դ. Յօդ կը կոչուի և կամ յ գիլն որ կը դրուի
դոյականին ծայլն, երբ որոշեալ մտքով զ սրծածուած է:

Օր. Խնձորի ծառ ըսելով կը հասկնանք ո եւ իցէ խնձորի
ծառ մը, բայց երբ կը սենք խնձորին ծառը այն ատեն որոշ
խնձորի ծառը կը հասկնանք:

Գիտելիք. Զայնաւորով վերջացող անուններ միշտ և
յօդը կ'առնուն: Զըսուիր կատուը, այլ կատուն:

Նոյնպէս երբ յաջորդ բառը ձայնաւորով սկսի: Ինչպէս
Քարն որ ինկաւ. Տեղն ուր նստանք:

Իսկ անձայն յ ով վերջացող բառեր երբ յօդ առնուն՝
սովորաբար այս յ առուը կը կորսնցնեն, ինչպէս, սատանայ-
սատանան, Տղայ-Տղան:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ 23.

Անուններուն ծայրն յօդ դիր եւ բա՛ թէ ինչ կ'ըլլայ խօսին
իմաստը:

Մարդէ չփախնար. — Թուղթ տուր ինծի. — Զայն լսե-
ցի. — Միհրան պարտիզանի տղայ է. — Եղբայրդ գիրք
կարդաց. — Կերար հաց. — Ես հաց կուզեմ, գուն չուր
կուտաս. — Դսլրոցի աշտիերտ. — Զինուորի թուր. — Զուրի
աման. — Պատուհանի փեղկ. — Դրբի կողք:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ 24.

Սա անուններէն որնին յօդ ունին:

Զին, եկեղեցին, զմելին, անկիւն, անկողին, մեղրն,
հացը, լուսին, կանոն, սալորն, ոլոռն, աստղը, աղքատն,
սայլապան, ամառն, աման, ալիւր, քթան, աղայ, բան,
բժիշկ, ձուկն ու մուկը, փիղը, հոփիւն, մատեան, գիրք,
կորիւն, մելուն, թանաքն, գուռ, պատեան, թանաք, կօշիկն:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ 25.

Յօդով հալովիցէ սա անունները:
Կատու, ձի, լեզու, շուկայ, հաւ, գեւ, չայ:

ԳԼՈՒԽ Գ.

Ա Մ Ա Կ Ա Ն

Յ Յ Դ. Աժական կը կոչուի այն բառն որ կը ցուցնէ
Գոյականին որպիսութիւնը կամ կ'որոշէ, կը սահմանա-
ւորէ անոր իմաստը:

Յ Յ Դ. Հինգ տեսակ Ս.ծական կայ. Որակական կամ
Հասարակ, Ցուցական, Ատացական, Թուական, Ա-
նորոշ:

1. ՈՐԱԿԱԿԱՆ ԱԾԱԿՈՆ

Յ Յ Դ. Որակական ածականը դոյականին որպիսու-
թիւնը կը ցուցնէ:

Օրինակ. Խելօֆ տղայ, ճերմակ թուղթ:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ 26.

Որուեցէ Որակական ածականներն ու գոյականներն

Համեստ աղջիկ, բարի Աստուած, չար սատանայ, մոլի
թաղաւոր, հզօր առիւծ, գժուար դաս, դիւրին գործ, ան-
վախ մարդ, քաջ եւ կտրիճ երիտասարդ, մատղաշ հասակ,
ազնիւ տղայ, սեւ մազ, ցած ձայն, անուշ հոս, կիզիչ արեւ,
կրակոտ ձի, հոտաւէտ վարդ, փայլուն աչք, աղօտ սատղ,
գթած հայր:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ 27.

Սա գոյականաց յարմար Որակական ածական կցէ:

Տղայ, գլուխ, գլխարկ, թաշկինակ, գիւղ, աղուէս,
մարդ, գաս, կօշիկ, գանակ, տուն, գագաթ, բնութիւն, ա-
շակերտ, բժիշկ, մայր, վարդ, լուսին:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ 28.

Հետեւեալ Որակականներն յարմար գոյականներ կցէ:

Մանր, գեղեցիկ, կակուղ, կանաչ, մաքուր, թաց, չոր,
սուր, ուղիղ, խոր, սեւ, ծոյլ, անհամ, անլի, աղէկ, կար-
միր, խարտեաշ, սիրելի, հաստ:

39. Արտակական ածականներէն գոյական կը շինուի ուրին մասնիկով. ինչպէս՝ մեծ-մեծուրին, ծանրանուրութիւն :

Գիտելիք. Անձ, կենդանի եւ առարկայ ցուցնող (նիրական, տեսանելի, բանձրացեալ) անուններէն չառը մտաւոր, անհետանելի կամ վերացեալ անուն կ'ըլլան ուրին մասնիկով.

Ինչպէս հայր-հայրուրին, տղայ-տղայուրին :

40. Շատ անգամ գոյականներուն ծայրը մասնիկներ կցելով ածական կը կազմուի. Այս մասնիկներն են. ական, աւոր, ային, եան, ելի, ալի, ոս, ուս, եղէն, եայ, եղ, ող, ած, իչ եւայլն :

Հ Բ Ա Հ Ա Ն Գ 39.

Հետեւալ ածականներն ու գոյականները վերացեալ անուան փոխ ուրին մասնիկն աւելցնելով.

Հայ, քաջ, իշխան, հին, եղբայր, սիրելի, թանձր, աղնի, մանուկ, աղուոր, կառավար. ակար, տէր, ատելի, ծեր, թագաւոր, տիտոր, ծոյլ, գասատու, անառակ, մայր, մեծ, հայր, բարի, ցած, ժամկոչ :

Հ Բ Ա Հ Ա Ն Գ 40.

Ս. ծականը զոյականի փոխն եւ փոխապարձաբառ :

Սիրելի եղբայր, ձմարիտ Աստուած, մարդկային յանցանք, խաղաղասէր մանուկ, մթին գիշեր, անմել տղայ, վրէժխնդիր կրակ, ծեր հայր, բարեսիրտ մարդ, ամբարիտ հեթանոս, չնորհալի եղբայր, կապայտ երկինք, դիւական չարութիւն, գեղեցիկ հրաշք, անգութ բռնաւոր, հայկական պատիւ, տաճկական հիւրասիրութիւն :

Հ Բ Ա Հ Ա Ն Գ 41.

Հետեւալ մասնիկներով վերցացող ինիգական ածական զեկ:

Ական, աւոր, ային, եան, ելի, ալի, ոս, ուս, եղէն, եայ, եղ, ող, ած, իչ, եւլն :

Ծան. Դասատուն փոխիխման եւ զեղչման կանոններուն վրայ գաղափար թող տայ բերանացի :

Հ Բ Ա Յ Ո Կ Ա Ն Ա Ծ Ա Կ Ա Ն

41. Ցուցական ածական են այս (աս), այդ (աս), այն (ան), աս, դա (տա), նա, սոյն, դոյն բառը որոնք իրը թէ մատով կը ցուցնեն առարկան:

Գիտելիք. Այս, աս, սոյն, կը ցուցնեն մօտ բան մը, այդ, դա, դոյն քիչ մը հեռաւոր առարկան, այն, նա, նոյն, աւելի հեռուն եղող բան մը :

Գիտելիք. Ցուցական ածականները չեն հողովուիր եւ ոռփրաբար ցուցական ածական ունեցող գոյականներն յօդ կ'առնեն. ինչպէս այս տունն, այդ պարհեղը եւայլն :

Հ Բ Ա Հ Ա Ն Գ 42.

Հոլովիցեկ.

Այս մարդը, այդ ծառը, այն հողը, սա եկեղեցին, սա րուղը, նա յարը, սոյն համակը :

Հ Բ Ա Հ Ա Ն Գ 43.

Որոշեցեկ ցուցական ածականները.

Ո՞վ ստեղծեց այս աշխարհս. — Միթէ սա գի՞րքն է ձեր փնտառածը. — Ո՞ւսկից կը բզիսի այս վճիտ ջուրը. — Սա տղան աւելի խելօք եւ մտացի կ'երեւի. — Այս մարդն, այդ լճակդ, այն անտառներն, սոյն հոյակաս դկեակին տիրոջն են. — Եպն ատենները ձանչցաց քու գեղեցիկ ձիրքերդ. — Սա ուսեալ կնոջ եղբայրն ովէ : — Տա դուռը զարկ. — Եա մարդն հմուտ ճարտարապետ մ'է. — Առ այս թղթերն եւ տուր ինձ այդ կազմամարը :

Հ Բ Ա Հ Ա Ն Գ 44.

Որակական ածականները զոյականի փոխեցեկ մասնիկները ջնջելով :

Դպրոցական, հայրական, ծովային, կանոնաւոր, սիրելի, չնորհալի, փայլուն, փրկիչ, ուժեղ, քսոստ, ջղուտ, արձաթեղին, ներող, ընկերական, հարաւային, փառաւոր, Հայկեան, մատնիչ, ողորմած :

Յ. ԱՏՈՅՈՒԿՈՆ ԱԾՈՎԿՈՆ

42. Ստացական ածականները կը ցուցնեն թէ
բան մը որու ստացուածքն է:

43. Ստացական ածական են. Ա. գէմք՝ իմ, մեր.
Բ. գէմք՝ քու, ձեր. Գ. գէմք՝ իւր կամ իր, իրենց.
անոր անոնց :

Գիս. Ստացական ածականները չեն հոլովուիր եւ Ստացական ածական ունեցող անուններ երբեմն ս, դ, և կամ ը գերերը կ'առնուն իրենց ծայրն: Այս ս, դ և տառերը կը կոչուին դիմուրոշ յօդ:

Հ Ր Ա. Հ Ա. Ն Գ 35.

Հոլովեցիք.

Իմ զրիչս, քու ձեռփյ, իւր աչը, անոր մայրը, մեր հասկը, ձեր փողոցը, իրենց հայրենիիը, անոնց զինուորները:

Հ Ր Ա. Հ Ա. Ն Գ 36.

Ստացականներն յոգնակի քրէք.

Իմ նոր բնակարանս: — Քու անխոհեմ վարքդ: — Իմ
անկեղծ փափաքս: — Սնոր մեծ սեղանը: — Իւր գեղեցիկ
հրացանը: — Քու կապոյտ շրջազգեսադ: — Իմ ընդարձակ
կալուածներս: — Սնոր խոհեմ ընթացքը: — Այս ծառն ու
իւր համեղ պտուղը: — Քու սեւ մազերդ: — Իմ սիրելի
ծնողքս: — Իւր աշխտ ձին ու իմ հուժկու ջորիներս:

Հ Ր Ա. Հ Ա. Ն Գ 37.

Գծերուն տեղ դիր ստացական ածական մը.

Մովկէս կ'ըսէր—ժողովրդեան. եթէ պատուէք—ծնողքը,
—կեանքն երկարատեւ կը լինի: Երջանիկ է այն աշակերտ-
որ—ջանիւք—աշխատասիրութեամբ եւ—բարի վարքով սիրե-
լի եղած է—ուսուցիչներուն: Բարի հայր մը կը սիրէ—զա-
ւակներն բայց չսիրէր—թերութիւնները: Սիրեցէք—զաւակն
ներն, բայց մի սիրէք—թերութիւններն: Կը սիրեմ—բայց չեմ
սիրեր—բնաւորութիւնդ: Ա. Աչնքս ալ յարդանք եւ ոէր կը
պարտինք—ծնողքին: Մարդը կ'ամրի—ոստայնով, ինչպէս
որսորդն—որսով:

4. ԹՈՒԱԿՈՆ ԱԾԱԿՈՆ

44. Թուականները կը ցուցնեն թիւ և կարգ:

45. Թուական ածականները կրկնին են.

1. Բացարձակ՝ որ առարկացին քանի հատ ըլւալը կը
ցուցնէ: Մեկ, երկու կամ երկու, երեք, չորս, հինգ, վեց,
հօրն, ուր, ինն, տասն, տասնը մեկ, տասն երկու, տասն երեք,
տասն, երեսուն, երայլ:

2. Դասական՝ որ դաս, կարգ, աստիճան կը ցուցնէ եւ
կը շինուի բացարձակին վրայ րորդ կամ երորդ աւելցը-
նելով: Առաջին (եւ ոչ միերորդ) երիրորդ, երրորդ, չորրորդ.
հինգերորդ եւլն:

Գիս. Ա. Բացարձակներուն վրայ ական մասնիկը գնե-
լով կ'ունենանք մակարաշնական թուականներ: Խնչպէս. ե-
րեսական, տասնական եւլն. Նոյնպէս նոց մասնիկով կը կազ-
մուին արծէք եւ չափ ցուցնող թուականներ. երկութնոց, չորսնոց, տասնոց եւլն:

Գիս. Բ. Թուական ածականները կը հոլովուին հոլովման
ընդհանուր ձեւին համեմատ:

Հ Ր Ա. Հ Ա. Ն Գ 38.

Գրեցէք բացարձակ բուականները մինչեւ հարիւ:

Հ Ր Ա. Հ Ա. Ն Գ 39.

Գծերուն տեղ հարկ եղած բացարձակները դիր:

Անսուած աշխարհս — օրուան մէջ ստեղծեց: Երկու
անգամութ — կ'ընէ: Անսուան մէջ — օր կայ: — ասրին
դար մ'է: Քրիստոսի առաքեալները — էին: Այբուբէնը —
գիր կը պարունակէ: Տարին — եղանակի բաժնուած է: Մէն
մի եղանակ — ամիսէ կը բարդկանայ: Շաբթուան մէջ — օր
կայ գործի եւ — օր հանգստեան: Դպրոցներու արձակուրդ-
ները սովորաբար — շաբաթ կը տեւեն: Մէկ Օսմաննեան ոս-
կին — դահեկան կ'արծէ: Մէկ գահեկանը — վաղ եւ մէկ
փողը — ստակ:

Հ Ր Ա. Հ Ա. Ն Գ 40.

Հոլովեցէք բուական ածականներն մելից մինչեւ տասն:

5. ԱՆՈՐՈՇ ԱԾԱԿԱՆ

46. Անորոշ ածական են այն բառեր որ գոյականին կուտան անորոշ և ընդհանուր իմաստ մը:

47. Անորոշ ածական են. մը կամ մի, մէն մի, իւնի մը, մի յանի, միւնոյն, նոյն, ամէն, բոյոր, ուրիշ, միւս, ինչ ինչ, այս ինչ, այն ինչ, ումանի, անձնիւր, իւրաքանչիւր, ինչ, ո՞ր, յանի, ո՞րչափ, ո՞րիան, ո՞րպիսի, ի՞նչպիսի, այսչափ, այսիան, ոչ մի:

Գիտ. Ա. Մը եւ մի անորոշներուն ը եւ ի տառերը կը բառուելով տեղը ապաթարց կը դրուի եթէ յաջորդ բառը ձայնաւորով կը սկսի: Ինչպէս՝ Մարդ մ'եկաւ, խնձոր մ'առի:

Գիտ. Բ. Անորոշ ածականները չեն հոլովուիր եւ գրեթէ ամէնն ալ գոյականէն առաջ կը դրուին:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ 41.

Անորոշ ածականներն սուրագծեցէք :

Գրիչ մը, մէն մի ճիւղ, քանի մը հոգի, մի եւ նոյն օրը, նոյն միջոցին, ամէն մարդ, բոլոր տարին, ուրիշ տեղ, միւս եղբայրը, ի՞նչ գործ, ինչ ինչ ինդիրներ, այս ինչ գիրքը, այն ինչ բանը, քանի մը զինուորներ, անձնիւր քաղաքացի, իւրաքանչիւր աշակերտ, ինչ խօսք, ո՞ր փողոց, ո՞րչափ ձաղիկ:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ 42.

Ի՞նչ ենակի են ենենեալ ածականները :

Մեծ, մէկ, մը, իմ, մի, այս, տատջին, տաք, բարակ, սա, այլ, այդ, նոյն, քու, հինգ, հին, չորրորդ, երերուն, երեսուն, սոյն, անձնիւր, հարիւր, լաւ, այն, տա, յիսուն, երրորդ, նեղ, երկուս, կըոր, ճերմակ, չորսնոց, տասնական:

Գ Լ Ո Ւ Խ Գ .

ԴԵՐԱՆՈՒՆ

48. Դերանունը բառ մ'է որ կը դրուի արդէն յիշուած անդրան մը տեղ զայն չկրկնելու համար. Ինչպէս՝ Ասուած արդար կ. ՆՍ. կը պատճե յանցաւորները:

49. Հինգ տեսակ գերանուն կայ. Էական կամ Անձնական, Յուցական, Սացական, Անորոշ և Յարպերական :

1. ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

50. Անձնական գերանունը կը ցուցնէ անձերը կամ դէմքերը որ երեք են.

	Եղակի	Ցովնակի
Ա. Դէմք	Ես	Մենք
Բ. »	Դու	Դուք
Գ. »	Ան, Նա	Անոնք, Նոքա
	Ինք, ինքն	Իրենք

Գիտ. Անձնական գերանուն են նաևւ. իւրարու, մեկմեկու. ասոնք վիխաղարձ դերանուն ալ կը կոչուին:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ 43.

Օրուեցէք անձնական գերանուններն եւ բաէք քէ որ բառերուն ենի դրուած են:

Յակոր շատ կը սիրէք Յովոէփը, նա հագցուց անոր գեղեցիկ կապաց: — Կովն ու շունը կը վիճէին իրարու հետ: — Տղաք, պէտք է գուք օգնէք իրարու: — Զին, կովն եւ եղը ըսին. ինչո՞ւ մենք ծառայենք մարդուն, նա թող ուրիշ ծառայ գտնէ: — Յուսիկ եւ Շաւարչ լաւ աշակերտներ են. անոնք դպրոց կ'երթան եւ իրարու կ'օգնեն: — Յիսուս աշխարհ եկաւ. նա չարչարուեցաւ մարդուն փրկութեան համար:

51. Անձնականները կը հոլովուին այսպէս.

Ա. Դէմք

Եզակի	Յովնակի	Եզակի	Յովնակի
Ո. Ես	մենք, մեք	դուն, դու	դուք
Ս. իմ	մեր	քու	ձեր
Տ. ինձի, ինձ	մեզի, մեզ	քեզ	ձեզ, ձեզի
Հ. իս, զիս	մեզ, զմեզ	քեզ, զեբզ	ձեզ, զձեզ
Բ. ինձմէ, ինէ	մեզմէ, մենէ	քեզմէ, քենէ	ձեզմէ, ձենէ
Գ. ինձմով	մեզմով	քեզմով	ձեզմով

Գ. Դէմք

Եզակի	Յովնակի	Եզակի	Յովնակի
Ո. ան, նա	անոնք, նորա	ինքն	իրենք
Ս. անոր, նորա	անոնց, նոցա	իրեն	իրենց
Տ. անոր, »	անոնց, նոցա	իրեն	իրենց
Հ. ան	անոնք	ինքն	իրենք
Բ. անկէ	անոնցմէ	իրմէ	իրենցմէ
Գ. անով	անոնցմով	իրմով	իրենցմով

Գիտ. Փոխադարձ դերանուններն ուղղական չունին :

Սեռ. եւ Տրական	իրարու	մէկմէկու
Հայցական	իրար	մէկմէկ
Բացառական	իրարմէ	մէկմէկէ
Գործիական	իրարմով	մէկմէկով

Հ Բ Ա Հ Ա Ն Գ 44.

Ուստից սա դերանուններուն թիւն ու հոլովը : Յետոյ և զականներն յովնակի քրեք եւ յովնակիներն եզակի :

Ես, քեզմով, իրենցմէ, ինքն, անկէ, նա . մեզմով, իմ, գու, իրենք, ձեզ, զիս, իրենք, անոնց, ան, քեզմէ, մեզ, իրեն, ինձ, ձեզմէ, անով, իրենցմով, անոր, զանոնք, անոնք, իրմէ, ինձմէ :

2. ՅՈՒՅՈՒԿԱՆ ԴԵՐԱՆՈՒԻՆ

52. Յուցական դերանուններն իբր թէ մատնաւնիշ կ'ընեն, կը ցուցնեն անձերն ու իրերը որոց տեղ կը բռնեն :

53. Յուցական դերանուն են . Այս, սա, սոյն . Այդ, դա, դոյն . Այն, նա, նոյն . Ասոնք առանց դոյականի կը դորձ ածուին :

Ոմանք կը գործ ածեն նաեւ ասիկա, ատիկա, անիկա միայն եզակի ուղղական եւ հայցական :

54. Այդն, դոյն, նոյն հոլովման ընդհանուր ձեւին կը հետեւին և միայն եզակի կը գործ ածուին :

Այս, սա եւն . կը հողվուին սապէս .

Եզակի Յովնակի

Ուղղական	այս, սա	ասոնք
Սեռ. եւ Տրակ.	ասոր	ասոնց
Հայցական	այս, սա	ասոնք
Բացառական	ասկէ	ասոնցմէ
Գործիական	ասով	ասոնցմով

Հ Բ Ա Հ Ա Ն Գ 45.

Հոլովեցէ յուցական դերանուններ :

Հ Բ Ա Հ Ա Ն Գ 46.

Եզակի յուցականներն յօհնակի թէ եւ փոխադարձաբար : Ասոնցմէ, սոյն, այն, գա, սոյնով, անոնք, Ասկէ աւ հրամեցէք : Ատոր ինչ անուն կուտան : Անոնցմէ ինչո՞ւ չառոիր : Սա աղուոր չէ : Անոնց զրկէ : Ատկէ աւելի մեծ յանցանք ըլլար : Ատոր որչափ յոգնեցայ : Անոնցմէ՞ առիր թէ ասկէ : Քեզ կուտամ այս, եթէ խօսիս : Ասով գոհ չէս : Անոնցմէ բեր : Ատոր ալ տուր, անոնց ալ : Իմ վիճուռածս այդ չէ : Ան ով, աս ով : Ասիկա ընտրեցիր թէ անիկա :

Յ. ԱՏԱՅԱԿՈՆ ԴԵՐԱՆՈՒՆ

55. Ստացական գերանուները կը յուցնեն թէ որու կը վերաբերի (ստացուածքն է) այն բանը որուն վրայ կը խօսուի (*):

56. Ստացական գերանուները կը շինուին Ստացական ածականներէն ս, դ, և (կամ լ) գիմորոշ յօդերավ և ասոնք են.

Եզակի

Ա.	դէմք իմս կամ իմինս	մերը կամ մերինը
Բ.	» յուկդ » յուկինդ	ձերը » ձերինը
Գ.	իրը » իրենը	իրենցինը
	անորը » անորինը	անոնցինը

Յոհանիկի. իմիններս, մերինները, յուկիններդ, ձերինները, իրեններս, եւլք:

57. Ստացականները կը հոլովուին այսպէս.

Եզ. իմինս, իմինիս, իմինէս, իմինովս:

Յոհ. իմիններս, իմիններուս, իմիններէս, իմիններովս:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ 47.

Հոլովեցէք ստացական գերանունները:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ 48.

Ստացական գերանունները զայք եւ ապա նոյն խօսերն յոհանիկի քրէք և բառին տեղ են զնելով եւ, գոյականներն ալ յոհանիկի վերածելով :

Ս.յս պարտէզն իմս է: — Ս.յդ տունը քուկդ է: — Ս.յս նաւակը մերն է: — Ս.յդ արան սնորն է: Ս.յս գերարկը քուկինդ է: — Ո՞ր ծրարն է անոնցինը: — Ս.յս պարտէզն է ձերինը: — Հոն չէ քուկինդ: — Հոն է ձերինը: — Ս.յս անոնցինը: — Սնորինը տեսար թէ իմինս: — Ս.յս սոլասաւորը ձերինն է: — Ս.յս գրիչն բուս է թէ քուկդ: — Ս.յս գանդակը ո՞ր եկեղեցւոյն է. ասորինը թէ անորինը: — Ո՞ր խանութէն առիր այս կտաւը, ասոնցինն թէ անոնցինն:

(*) Ստացական գերանունը կը դրուի Ստացական ածական ունեցող գոյականի մը տեղ:

Հ. ԱՆՈՐՈՇ ԴԵՐԱՆՈՒՆ

58. Անորոշ գերանուններն ընդհանուր և անուրոշ գաղափար մը կուտան այն անձերուն և իրերուն որոնց տեղ կը դրուին:

59. Անորոշ ածականներն են նաև անորոշ գերանուն, միայն թէ գոյականի հետ չեն դործածուիր և կրնան հոլովուիլ:

Դիս. Անորոշ գերանուններէ ոմանք հոլովման այլ եւ այլ ձեւեր ունին: Ասոնք են (*): Մին, մեկը, ամեն, ով, որ, ինչ, շատեր, ոչինչ, ոչ ո՛, եւայլն:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ 49.

Հոլովեցէք սա անորոշ գերանուններն հոլովման ընդհանուր ձեւին համեմատ :

Իւրաքանչիւր, միւս, ուրիշ, մի քանի, նոյն, բոլոր, ոչինչ, այսինչ, անձնիւր, քանի, որչափ, այսչափ, այսքան, այնպիսի:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ 50.

Ս.ամիերն սոլուզգծէ անորոշ գերանունները :

Ինչ որ կ'ուզես որ ուրիշը քեզ ընէ, նոյնն ըրէ ուրիշին: — Շատեր կը պնդեն թէ Դանիացինները գտած են Ամերիկան Քրիստոփոր Գոլոմոնուէն տուած: — Ոչինչ այնքան քաղցր է որքան բարեգործութիւնը: — Ոչ ոք սիտի գայ: — Ս.յս մարդոց իւրաքանչիւրն իւր կարծիքն ըստաւ: — Ով որ կ'ուզէ հետս թող գայ: — Ոչ ոք մարդարէ է իւր գաւառին մէջ: — Մենք ամէնքս հաւասար ենք Աստուծոյ տուշեւ: Մի քանին ինձ տուր: — Բոլորն ալ ուրիշներուն տաւաւ:

(*) Դասատուն ասոնց հոլովումը կը գրէ տախտակին վրայ եւ աշակերտները կ'օրէնտափին:

5. ՅԱՐԱՔԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒԻՆ

60. Յարաքերական գերանուն կը կոչուի որ բառ և կանխաւ յիշուած անուան կամ գերանուան մը հետ յարաքերութիւն կը ցուցնէ :

61. Այս բառ՝ որուն կը վերաբերի յարաքերական գերանունը, կը կոչուի յարաքերեալ :

Որ. Թուչունն որ կ'երգէ : Նամակը զոր բերաւ :

Այս խօսքերուն մէջ որ, զոր են յարաքերական գերանուն եւ յարաքերեալ են բոցունն, նամակը :

62. Որ գերանունը կը հոլովուի այսպէս :

Եզակի Որ, որու, որուն (որու), զոր, որմէ, որով :

Յոն . Որոնֆ (օրֆ), որոնց (օրոնց), որոնի (օրու), օրոնցմով :

Հ Բ Ա Հ Ա Ն Գ 51.

Որուցեցէք յարաքերականներն ու յարաքերեալներն :

Հաւը զոր վաճառեցինք : — Հիւրերը որք ներս մտան : — Գրիչները զորս կոտրեցիր : Մանգաղը որով կը հնձեն : — Հայերը որք ցրուած են աշխարհիս ամէն կողմը : Աղքատները որոց հաց տուիք : — Ո՞վ է որ կը խօսի : — Այն մարդը որուն տղան կը ճանչնաս : — Ընկերս որուն ընծայեցի գիրք մը : — Հարցումը զոր ըրիք : — Ծառն որմէ քաղեցինք սալըր : — Նաւերն որոցմով ճամփորդեցինք : — Այծերն որոցմէ կաթ կթեցինք :

Հ Բ Ա Հ Ա Ն Գ 52.

Զանազանեցէք անորոշ ածականներն եւ անորոշ դերանուններն :

Ոչինչ այնքան քաղցր է, որչափ բարեգործութիւնը : — Գրիչ մը տուր : — Անձնիւր ոք իւր չահը կը մտածէ : — Միքանի ծառ տնկեցի : — Միքանին ինձ տուր, միւսներն ալ դուն առ : — Այս մարդոց մին հայրս է, միւսն ալ հօրեղբայրս : — Եղբայրներէս մին երաժշտութիւն կ'ուսանի : — Բոլոր գիշերն հսկեցինք : — Ծառ մը կարեց : — Ծառերէ մին կարեց : — Ուրիշ տղաք ալ կուգան : — Ուրիշը կը ճանչնաք :

Գ Լ Ո Ւ Խ Ե.

Բ Ա Յ

63. Բայ կը կոչուի այն բառն որ գործողութիւնն կամ վիճակ կը ցուցնէ, այսինքն ընելի կամ ըլլալ :

Օրինակ. Հայրս կը զրէ : Արեւը պայծառ է :

Տ Ե Ր Բ Ա Յ Կ Ա Մ Ն Յ Ա Յ

64. Բայի մը սէրը կամ ենթական է այն բառն որ կը ցուցնէ գործողութիւնը կատարող անձը կամ իրը :

Ինչպէս . Արշակ կը խաղայ : Հացը կ'ուսուի :

Արշակ բառը կը խաղայ բային տերն է, այսինքն Արշակ է որ խաղալու գործը կը կատարէ : Հացը բառն կ'ուսուի բային ենթական է :

65. Բայի մը ենթական ճանչնալու համար քովը գնելու է ո՞վ կամ ի՞նչ հարցումները :

Ինչպէս . կը խաղայ, ո՞վ — Արշակ: Կ'ուսուի, ի՞նչ — Հացը:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ 53.

Որուցեցէք բայն ու ենթական :

Օձը կը սողոյ : — Զուկը կը լողոյ : — Տղան կը խաղայ : — Ծոյը կը կաղոյ : — Առագաստները կ'ուսիին : — Գլուխ կը ցաւի : — Տերեւները կը գեղնին եւ կը թափին : — Մարդիկ կը խորհին եւ կը խօսին : — Դուն ո՞վ ես : — Ո՞վ են այս պարոնները : Ես կ'աշխատիմ, դուք ալ աշխատեցէք : — Աստուած ողորմած է : Ես կը ներէ զզացողներուն : — Հաւերը կ'ածեն հաւկիթ եւ մինք կ'ուտենք : — Հաւկիթն ունի ճերմկուց եւ գեղնուց : — Գեղնուցն է օդտակար մեր սննդեան համար :

ԲԱՅԻՆ ԽԵԴԻՐԸ ԿԱՄ ԼՐԱՑՈՒՑԻՉԻԶԲ.

66. Խնդիր կոմ յրացուցիչ կը կոչուի այն բառն
որ բային իմաստը կ'ամբողջացնէ:

67. Երկու տեսակ խնդիր կայ. սեռի խնդիր և
քննորեան խնդիր.

1. ՍԵՌԻ ԽՆԴԻՐ

68. Սեռի խնդիրը կը ցուցնէ անձ կամ իր մը ո-
րուն վրայ կը կատարուի բային ցուցուցած գործողու-
թիւնը:

69. Բայի մը սեռի խնդիրը գտնելու համար քովը
սա հարցումները զնելու է. զո՞վ (անձերու համար) զի՞նչ
կամ ի՞նչ բանը (իրերու համար):

Օրինակ. կը պաշտեմ Աստուած. Դուն բաղեցիր վարդ:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ 54.

Դեկ բայերն, եւրականեւն եւ սեռի խնդիրներն:

— Երկուգործը կը մշակէ երկիրը: — Բանակը պաշտ-
ապանեց հայրենիքը: — Աստուած սիստի գատէ մեր գործերը:
— Նաւազը վարեց նաւը: — Լաւ գրքերը կը զարդարեն
միտքն եւ կը մշակեն սիրտը: — Վագրը երրեմն իւր ձա-
գերն իսկ կը պատառէ: — Յովսէփ աղատեց Եգիպտոս սովէ:
— Կիրքերդ կը կորացնեն զքեզ: — Արեւը կը լուսաւորէ
աշխարհը: — Եղբայրս շատ կը սիրէ զիս: — Տղաք իրենց
դասերը կը սերտեն: — Կայէն զարկաւ սպաննեց իւր եղ-
բայրը՝ Սրէլ: — Աստուած օրինեց Արքահամը:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ 55.

Գծերուն տեղ սեռի խնդիր դրէ:

Աստուած դրախտէն վռնտեց: — Մովսէս Եգիպտոսէն
հանեց: — Անձրեւը կը զովացնէ: — Ակռան կը մանրէ: —
Կատուն կը լրտեսէ: — Աստուած անիծեց: — Զին կը ձանչ-
նայ: — Շունը կը պահպանէ: — Հովիւը կ'արտածէ: —
Յուղա համբուրելով մատնեց: — Ս. Մեսրոպ գտաւ: —
Տրդատ սպաննել տուաւ: — :

2. ԲՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

70. Բնուրեան խնդիրը կ'ըլլայ տրական, բայս-
ուական եւ գործիական հոլով Սնաւն կամ Դերանուն մը
առանձին՝ կամ մէջ, տակ, վրայ, բով, առ հըն. բա-
ռերու հետ:

71. Բնութեան խնդիրը կը ճանչցաւի սա հար-
ցումներով.

Սնձերու համար իրերու համար
Տրական՝ որո՞ւ, որո՞նց ի՞նչ բանի, ի՞նչ բաներու
Բացուկան՝ որմի, որո՞նցմի, ի՞նչ բանէ, ի՞նչ բաներէ
Գործիկն՝ որո՞վ, որո՞նցմիվ, ի՞նչ բանով, ի՞նչ բաներով
Նաեւ սա հարցումներով. երբ, ուր, ուսկից, ինչն, ինչն,
ինչն, ինչպիս եւլն.

Հ Բ Ա Հ Ա Ն Գ 56.

Դեկ բնուրեան խնդիրները պատշաճ հարցումնով:

Հնազանդինք մեր խոճի ձայնին: — Դիմագրէ չար մի-
տումներուդ: — Զարերը կը միաբանին իրենց մոլութիւն-
ներով: — Կեղծաւորը կը խօսի իւր գաղափարին հակառակ: —
Կողբամ այն անձին վրայ որ կը հնազանդի իւր կիրքին: —
Ամեն բան չվերջանար մահով: — Մոյր մը գիւրաւ կը ներէ
իւր գաւկին: — Ճիր գործաւորը կարօտ չըլլար շափկի: —
Անձրեւը կը տեղայ երկինքին:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ 57.

Եեղագիր բաները սեռի թէ բնուրեան խնդիր են:

Ծառը կը ճանչցուի իւր պտղին: — Բարիի ըրէ մերձա-
ւորներուդ: — Ագահը իւր պատիսը կը զոհէ իւր շահերուն: —
Աստուած կուտայ սեռի փաքրիկ բոցնեներուն: — Եախ-
ընտեենք զիտորինք հարստորինեն: — Աղջկը չուան կը
մանէր իւր սեռեակին մէջ: — Պէտք է ներել ուրիշին բերու-
րինեներուն: — Բարեգործութիւնը կը բերէ իւր վարձը: —
Լիգուրկոս Սպարտայի տուաւ շատ իմաստուն օրհեններ: —
